

Պատասխան- Համայնքներում պետության և համայնքի հողերից հողամասերի վարձակալության կամ ձեռքբերման համար հարկավոր է դիմել համայնքի ղեկավարին: Իսկ վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով:

Աճուրդային կարգով հողամասերի օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին հայտարարությունները պարտադիր հրապարակվում են "Հայաստանի Հանրապետություն" օրաթերթում և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ հետեւյալ հասցեով՝ <http://www.azdarar.am>: